ՖՐԱՆՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ (1922 – 1980 թթ.)

Զ.Մ.ՂԱՍՍԱԲՅԱՆ

Մեծ եղեռնը վերապրած ու բնաջնջումից մազապուրծ եղած մոտավորապես 200 հազար հայեր հանգրվանեցին Եվրոպայի տարբեր երկրներում, այդ թվում 90 հազարը՝ միայն Ֆրանսիայում: Նրանց 50 %-ից ավելին նախկին գյուղացիներ էին, որոնք հաստատվելով Ֆրանսիայի տարբեր շրջաններում համալրում էին ֆրանսիական բանվորության շարքերը և լրացնում աշխատուժի այն պակասը, որը առաջացրել էր Առաջին համաշխարհային պատերազմը: Այդ ամենը կատարվում էր դժվարին ու շահագործման դաժան պայմաններում:

Ֆրանսահայ համայնքն իր ձևավորման ընթացքում անցավ զարգացման երեք հիմնական փուլ և ի վերջո Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում կայուն դիրքեր գրավեց:

Առաջին փուլն ընդգրկում էր 1922 – 1929թթ.: Ֆրանսիայում հանգրվանած հայերի 80 %-ից ավելին, իբրև էժան բանվորական ուժ, համալրեց ֆրանսիական սևագործ բանվորության շարքերը: Զրկված լինելով գոյության տարրական միջոցներից և չտիրապետելով ֆրանսերենին, նրանք ստիպված ամենածանր աշխատանք էին կատարում հանքահորերում, քարհանքներում, մետաղաձուլարաններում, քիմիական և այլ վտանգավոր արդյունաբերական ճյուղերում· Մարսելի և Միջերկրականի ափերի այլ քաղաքներում ու նավահանգիստներում բազմաթիվ հայեր աշխատանքի անցան որպես բեռնակիրներ (դոկերներ): Որոշ թվով հայեր, հատկապես որբ տղաներ ու աղջիկներ, պայմանագրային կարգով աշխատանքի անցան Կոտ դ'Ազուրի զանազան ագարակներում ու գյուղատնտեսական ֆերմաներում: Գառդանի և Ալլիի ածխահանքերում ու այլումինի գործարաններում հայ բանվորներն աշխատում էին 10 – 15 %-ով ցածր աշխատավարձով համեմատած օտար և ֆրանսիացի բանվորների հետ:

Այդ աշխատանքներում ներգրավված էին նաև հայ կանայք: Սակայն, նրանց մեծ մասն աշխատում էր լվացքատներում, ճաշարաններում, տնային տնտեսություններում և այլ բնագավառներում: Ռոն-Ալպյան շրջանում և Մարսելի նահանգում բազմաթիվ հայ կանայք, օգտագործելով իրենց հմտությունն ու փորձը, ներգրավվեցին բոժոժի աճեցման և մետաքսաթելի արտադրության ճյուղերում:

Կարճ ժամանակամիջոցում տարադիր հայ բանվորները լավագույն աշխատողների համբավ ձեռք բերեցին: Համեմատած Ֆրանսիայում աշխատող այլ օտար բանվորների հետ, հայերը յուրահատուկ սոցիալական վիճակում էին: Օտար բանվորները (իսպանացիներ, իտալացիներ, արաբներ և ուրիշներ) աշխատանքի պայմանների, կամ աշխատավարձի հետ անհամաձայնության դեպքում, կարող էին վերադառնալու հայրենիք, մինչդեռ, հայերը զրկված էին այդ հնարավորությունից և ստիպված էին ամենածանր աշխատանքներ կատարել ապրուստ ապահովելու համար: Հայ բանվորները, աստիճանաբար հարմարվելով տեղի պայմաններին, ընդ-

գրկվում էին զանազան արհեստակցական միությունների ու ֆրանսիական կոմունիստական կուսակցության շարքերը, որոնք պաշտպանում էին նրանց իրավունքները:

Մինչև 1929թ. հայերը Եվրոպայում, այդ թվում և Ֆրանսիայում, աշխատանք ձեռք բերելու գործում դժվարություններ չունեին, քանի որ երկրի տնտեսությունը վերելք էր ապրում: Կյանքի կայունացմանը զուգընթաց, ֆրանսահայ հասարակական-մշակութային կյանքն աշխուժացավ: Սակայն այն խափանվեց 1929 - 1933թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով, որն ընդգրկեց նաև Ֆրանսիայի տնտեսությունը: Արդյունաբերական ձեռնարկությունները համատարած փակվում էին: Հազարավոր բանվորներ ու ծառայողներ մատնվում էին գործազրկության: Աշխատանքից ազատվում էին առաջին հերթին օտար բանվորները, այդ թվում և հայերը: Լավալի օրենքի համաձայն, հիմնարկ-ձեռնարկություններում թույլատրվում էր աշխատել օտար բանվորների 10 %-ին[1]:

Գործազրկության մատնված հայ բանվորներն ապրուստի միջոցներ որոնելու նպատակով ստիպված էին լինում տեղափոխվել մի բնակատեղից մյուսը: Նրանք ձգտում էին բնակություն հաստատել այն քաղաքներում ու ավաններում, որտեղ տեղի մունիցիպալիտետը կամ այլ կազմակերպությունները թոշակ էին տալիս գործազուրկ բանվորներին:

1929 - 1933թթ. տնտեսական ճգնաժամի խորացման պատճառով Մարսելում, Լիոնում, Փարիզում և այլուր աշխատանքից ազատում էին նույնիսկ ֆրանսիական քաղաքացիություն ունեցող օտար ու ֆրանսիացի բանվորներին ու ծառայողներին, հատկապես հայ մասնագետներին (բժիշկներ, ատամնաբույժներ, փաստաբաններ և ուրիշներ), որոնք չունեին ֆրանսիական դիպլոմներ: Նրանց արգելվեց մասնավոր եղանակով համագործակցել ֆրանսիացիների հետ:

1930 - 1936թթ. միայն Դեսինի SLSA գործարանում 119 հայ բանվորներ զրկվել էին աշխատանքից[2]: Հայ գործազուրկները սկսեցին զբաղվել ջրջիկ առևտրով, արհեստով և որոշ ապրանքների վերամշակումով ու վաճառքով: Նրանք հիմնում էին փոքրիկ կրպակներ կամ սայլակների վրա վաճառում տանը պատրաստած քաղցրավենի, պարեն և այլ մթերքներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին ֆրանսահայերի այն սերունդը, որը ծնվել ու մեծացել էր Ֆրանսիայում, ստացել մասնագիտական կրթություն ու տիրապետում էր ֆրանսերենին, դառնում էր վարպետ-մասնագետ: Նրանց որոշ մասը սկզբում աշխատում էր որպես խառատ, էլեկտրիկ, մեխանիկ, մոնտաժող և ժամանակի ընթացքում հիմնում սեփական արհեստանոց: Այսպիսով, Երկրորդ աշխարհամարտի նախօրեին ֆրանսահայերի մի ստվար մասն աստիճանաբար դառնում էր մանր և միջին սեփականատեր: Փոքր բնակատեղերից ու գյուղերից, աշխատանքային պայմանագրերի ժամկետը լրանալուց հետո, հայերը տեղափոխվում էին մեծ

---

[1] Aida Boudjikanian-Keuroqlian, Les Armeniens dans la Region Rhon-Alpes, Audin-Lyon, 1978, p. 138. Լևոն Զորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, ֆրանսահայերու պատմություն, Բեյրութ, 1975, էջ 80:

[2] Aida Boudjikanian-Keuroqlian, նշվ. աշխ., էջ 128:

քաղաքներ: Արագ թափով տեղի էր ունենում ուրբանիզացում և սոցիալ-տնտեսական կյանքում շերտավորում, որը ցայտուն դրսևորվեց Երկրորդ աշխարհամարտի ժամանակ և նրա ավարտից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանում: Ֆրանսահայ համայնքի մի ստվար հատված սկսեց զբաղվել միջակ առևտրով ու արհեստներով: Այս երևույթը նշանավորեց Ֆրանսահայ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջին փուլի ավարտն ու երկրորդ փուլ թևակոխելը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում, այդ թվում և Ֆրանսիայում, Մարշալի պլանից հետո ծավալված տնտեսական վերելքի շնորհիվ ֆրանսահայ համայնքի կեսից ավելին ներգրավվել էր մասնավոր սեկտորի՝ առևտրի և արդյունաբերության տարբեր ճյուղեր: Այս տնտեսական փոփոխությունների շնորհիվ սկսեց առաջնակարգ տեղ գրավել հայ կինը, հատկապես՝ թեթև արդյունաբերության մի շարք ճյուղերում: Եթե նախապատերազմյան շրջանում հայ ընտանիքն աշխատում էր տնային պայմաններում և կատարում խոշոր ձեռնարկատերերի և առևտրականների պատվերները, ապա այժմ նա իր արտադրանքը վաճառում էր սեփական կրպակում կամ առևտրական ձեռնարկությունում, ժամանակի ընթացքում ընդլայնելով իր գործունեությունը:

Այդուհանդերձ, ֆրանսահայ համայնքի աշխատունակ զանգվածի մեծամասնությունը կազմում էր արդյունաբերական պրոլետարիատը, որն աշխատում էր ֆրանսիական արդյունաբերության բոլոր ճյուղերում, մինչև 1920 - 1926թթ. հայ բանվորությանը կարելի էր տեսնել հիմնականում կոշիկի և տեքստիլ արդյունաբերության ձեռնարկություններում: Կանանց ու աղջիկների զգալի մասը նույնպես ներգրավված էր հագուստեղենի, հատկապես տրիկոտաժի արդյունաբերության մեջ: Նրանք որակյալ բանվորուհիներ էին և բարձր աշխատավարձ էին ստանում:

Երիտասարդ աղջիկների որոշ մասը, հատկապես միջնակարգ և բարձրագույն կրթություն ստացածները, նախընտրում էին աշխատել տարբեր գրասենյակներում, բանկերում ու ապահովական բյուրոներում, քանի որ տղամարդկանց հավասար աշխատավարձ էին ստանում: «Հայ ազգային ճակատի» անմիջական օգնությամբ 1944 - 1947թթ. Մարսելի և այլ քաղաքների հայ դերձակները, չինարարներն ու կոշկակարները ստեղծեցին կոոպերատիվ արհեստանոցներ ու ֆաբրիկաներ[3]:

Վիետնամական պատերազմի և քաղաքական այլ իրադարձությունների պատճառով Ֆրանսիայում 1952թ. տնտեսական ծանր վիճակ ստեղծվեց: Լիոնում, Փարիզում ու Մարսելում հայ բանվերների և արհեստավորների կոոպերատիվ շարժումը նոր թափ ստացավ: Մոտավորապես 300 հայ կոշկակարների արհեստանոցներ ու ֆաբրիկաներ միավորվեցին՝ ունենալով 300 հազար ֆրանկ հիմնադրամ: Կարճ ժամանակամիջոցում այդ գումարը հասավ 150 միլիոնի: Հայ արհեստավորներն արտադրական կոոպերատիվ հիմնարկություններից զատ հիմնեցին կոոպերատիվ վաճառատներ, որտեղ վաճառում էին իրենց իսկ արտադրած կոշկեղենը: Վաճառատներ հիմնվեցին Փարիզում, Լիոնում, Մարսելում և այլ քաղաքներում: Հետագայում կոշկակարների կոոպերացիային միացան

[3] Ժողովուրդ, Փարիզ, 5. IV. 1946:

կաշեգործներն ու կաշվի վաճառականները: Ֆրանսիայի կաշվե-կոշիկի արտադրության 70 %-ը տալիս էին հայ կոոպերատորները :

1950-ական թվականներին ֆրանսահայ արդյունաբերական պրոլետարիատը շարունակում էր համալրել տնայնագործների շարքերը: Այսպես, օրինակ, Ռոմանում և այլ քաղաքներում կոշիկի արհեստագործական եղանակով արտադրության մեջ ներգրավվեցին հարյուրավոր հայ արհեստավորներ: Պետք է նկատել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում մինչև 1960-ական թվականները, Ֆրանսիայում կոշիկի պատրաստումը մեծ մասամբ արհեստագործական եղանակով էր կատարվում: Օրինակ, 1952թ. Ռոն-Ալպյան շրջանում հայ արհեստավորների 27 մասնագիտական բնագավառներում 2/3-ը կազմում էին երեք արհեստների խմբերը դերձակներ, վարսավիրներ, կոշկակարներ : Հայ կոշկակարների արտադրանքը մեծ համբավ էր վայելում թե որակով և թե մատչելի գներով[6]: Վիճակը նույնն էր նաև Մարսելում, որտեղ կոշկակարները, դերձակներն ու վարսավիրներն արհեստագործների մեծ տոկոսն էին կազմում:

Մարսելում, մյուս քաղաքների համեմատությամբ, մեծ տոկոս էին կազմում կոշկագործները, ոսկերիչներն ու ժամագործները :

Այդ ժամանակաշրջանում Մերձավոր արևելքից, Բալկաններից, Հայաստանից և այլ վայրերից եկած հայերի նախաձեռնությամբ Մարսելում, Լիոնում, Փարիզում ու դրանց արվարձաններում և ոչ հեռավոր քաղաքներում սկսեցին գործել ավտոմոբիլների նորոգման արհեստանոցներ, ընդլայնվեց ապուխտի և քաղցրավենու պատրաստման գործը:

Հետագայում հայ արհեստավորների զգալի մասն ընդլայնեց արտադրությունը, մեքենայացրեց ու անցավ արդյունաբերողների շարքը: Դա մեծ մասամբ կատարվեց կոշիկի, հագուստի, տրիկոտաժի, սննդի արտադրության և այլ բնագավառներում: Այժմ հայերը կարևոր տեղ էին գրավում Ֆրանսիայի տնտեսական կյանքում ունենալով ֆրանսիական բուրժուազիային հավասար իրավունքներ: Այդուհանդերձ, հայ արդյունաբերողները Ֆրանսիայի արդյունաբերական բուրժուազիայի կազմում փոքր տոկոս էին կազմում: Հայերի տոկոսը զգալի էր արհեստավորների, նաև՝ մանր ու խոշոր առևտրականների շրջանում: Դա բացատրվում էր նրանով, որ հայ արդյունաբերողների մեծ մասը երկրի տնտեսության այդ բնագավառը հատկապես նպարեղենի, հագուստի, կոշիկի և տրիկոտաժի արդյունաբերություն մուտք գործեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նրանց նորագույն սարքավորումներով հագեցած ձեռնարկություններում հիմականում 20 - 50 բանվորներ էին աշխատում: Սեն-Շամոնի կերպասեղենի ու հագուստի արդյունաբերության մեջ աչքի էին ընկնում Տոնապետյան եղբայրները, Ավետիսյանը, Գասպարյանը, Օպոզյանը և այլ արդյունաբերողներ[5]: Իսկ Լե Մուլինոյում

---

[4] Այսօր ապագա, Փարիզ, 22. I. 1952:

[5] Aida Boudjikanian-Keuroglian. Նշվ. աշխ., էջ 137:

[6] Այսօր ապագա, Փարիզ, 17. I. 1952: Այդ երևույթը նկատելի էր նաև եվրոպական այլ հայկական համայնքներում (Ռումինիայում, Բուլգարիայում, Հունաստանում և այլուր):

[7] Նույն տեղում, 22. I. 1952:

[8] Լևոն Զորմիսյան, Նշվ. աշխ., էջ 288:

նորագույն մեքենաներով սարքավորված՝ հայերի տրիկոտաժի արտադրությունը մեծ համբավ էր վայելում Ֆրանսիական ներքին շուկայում: Առաջնակարգ տեղ էր գրավում Գոճապլրքյանի տրիկոտաժի հիմնարկ-ձեռնարկությունը: Վալանսում նույնպիսի հիմնարկությունների սեփականատերեր էին Ճերանյան եղբայրները: Մետաքսաթելի արտադրության բնագավառում գործող Բանիելյան հիմնարկ-ձեռնարկությունը հսկայական քանակությամբ արտադրանք էր մատակարարում Ֆրանսիայի ներքին և արտաքին շուկաներին: Լիոնում նույնպես տրկոտաժի արտադրության զգալի մասը հայ արդյունաբերողների ձեռքում էր: Հսկայական քանակությամբ արտադրանք էր տալիս Ճնկոտյանի՝ նորագույն սարքավորումներով հագեցած բարձրորակ և նորաձև արտադրանքով հիմնարկությունը, որն առաջնակարգ դիրք էր գրավում Ֆրանսիայի ներքին շուկայում՝

Հայ արդյունաբերողները մուտք էին գործում նաև սննդարդյունաբերության մեջ: Դրանցից էին Պեյլերյան, Պահատուրյան, Մարգարյան ֆիրմաները Ռոն-Ալպյան շրջանում[9]:

Լիոնում և ամբողջ Ֆրանսիայում մեծ համբավ էր վայելում «Աստրա» պլաստիկ ապրանքների արտադրության սեփականատեր Նապոլեոն Պրլրքյանը[10]: Նրա ձեռնարկությունն ուներ 1000-ից ավելի աշխատող, մեծ մասը՝ հայեր: Այդ ձեռնարկությունն իր 17 բաժիններով ու արտադրամասերով, աշխարհում խոշորագույններից էր և արտադրում էր շշերի կափարիչներ ու պլաստիկ տարայի տարբեր տեսակներ: Այն ապահովում էր Ֆրանսիայի ձեթի շշերի 50 %-ի և քացախի ու հանքային ջրերի շշերի 60 %-ի պահանջարկը[11]: Ն.Պրլրքյանը նյութապես օժանդակում էր Լիոնի մունիցիպալիտետին: Նա նյութական մեծ օգնություն է ցուցաբերել հայկական եկեղեցու և նրա կողքին հայկական միջոցով դպրոցի շենքի կառուցմանն ու այլ աշխատանքների:

Մարսելում և նրա շրջակայքում սննդի, մրգերի ու բանջարեղենի, չրի և արևելյան համեմունքների մատակարարման գործում մեծ դեր ունեին հայ միջնորդ առևտրականները: Մեծաքանակ առևտրով էին զբաղվում Թեքեյան, Միրզոյան, Սելյան, Քեհյան, Կյումուշյան, Շահգամյան և այլ առևտրական տներ[12]: Այս առևտրական տներն աշխույժ գործունեություն էին ծավալում մինչև 1929թ.: Սակայն 1929 - 1933թթ. տնտեսական ճգնաժամից հետո քչերը գոյատևեցին:

1960 - 1970-ական թվականներին Ռոն-Ալպյան շրջանում հայ բնակչության տղամարդկանց 13 %-ը և կանանց 7 %-ը ներգրավված էին միջին և մանր առևտրի բնագավառներում[13]: Լիոնի 35000 առևտրականներից 437-ը հայեր էին: Նրանց 50 %-ը նորեկ հայեր էին, մեծ մասամբ Մերձավոր և Միջին արևելքից ու Բալկաններից[14]:

---

[9] Նույն տեղում:
[10] Aida Boudjikanian-Keuroqlian, նշվ., աշխ., էջ 137:
[11] Նույն տեղում:
[12] Լևոն Զորմիսյան, նշվ. աշխ., էջ 289:
[13] Aida Boudjikanian-Keuroqlian, նշվ., աշխ., էջ 138:
[14] Նույն տեղում:

Հայ առևտրականները, որոնք բնակվում էին մեծ քաղաքների ծայրամասերում կամ արվարձաններում, ձգտում էին տեղափոխվել կենտրոնական թաղամասեր: Լիոնում, Մարսելում, Փարիզում և հատկապես փոքր քաղաքներում բազմաթիվ հայ առևտրականներ կենտրոնական թաղամասերում դարձել էին ծխախոտի, գրենական պիտույքների, գալանտերեայի, տրիկոտաժի և այլ ապրանքների կրպակների, խանութների ու չքեղ առևտրական տների սեփականատերեր: Հայկական խոհանոցներում շատ ռեստորաններ, ճաշարաններ ու սրճարաններ նույնպես պատկանում էին հայերին: Փարիզում և Միջերկրականի ափի մեծ քաղաքներում (Մարսել, Նիցցա և այլն), ամբողջ Կոտ դ'Ազուրում հայտնի էին հայկական ռեստորաններն ու սրճարանները: Այսպես օրինակ, Գիսակ Փափազյանի «Անի» ճաշարանը Փարիզում, իսկ կողքին՝ «Ֆլորիա» հայտնի ճաշարանը, «Քինգ» ճաշարանը Կասիսում և այլն[15]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո միջնորդ առևտրով զբաղվող մի շարք հայեր կարողացել էին զգալի կապիտալ կուտակել և դառնալ խոշոր առևտրականներ ու արդյունաբերողներ: Հայ խոշոր առևտրական տներից էին Պահատուրյան առևտրական տունը Լիոնում, Սյութեվիլյան, Հմայակ և Ոսկան առևտրական տները Ալֆորվիլում[16]: Հայտնի էին նաև մետաքսաթելի ու տրիկոտաժի առևտրով զբաղվող Թովմասյան, Խաչիկյան եղբայրները: Մարսելում գործում էին հայերին պատկանող 20-ից ավելի մեծաքանակ առևտրով զբաղվող առևտրական տներ, ինչպես նաև կոշիկի արտադրությամբ ու խոշոր առևտրով զբաղվող 20-ից ավելի ֆիրմաներ[17]: Փարիզի խոշոր նպարավաճառներից էին Տապաղյան, Սապունճյան և Հրաչյան եղբայրները, որոնք բազմատեսակ ապրանքներ էին ներմուծում տարբեր երկրներից ու վաճառում սեփական առևտրական տներում: Այս շրջանում ֆրանսահայ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի հսկայական փոփոխությունները և, հատկապես, խոշոր արդյունաբերողների ու միջնորդ բուրժուազիայի հանդես գալը նշանավորեցին համայնքի տնտեսական զարգացման երրորդ փուլի սկիզբը, քանի որ տեղական խոշոր բուրժուազիայի կողքին հանդես եկավ և ձևավորվեց ֆրանսահայ խոշոր բուրժուազիան, որը հաստատուն դիրք գրավեց Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական կյանքում: Հայտնի էին Սեն-Ռաֆայելի, Պյուժե սյուր Արժանի և Տրագինիոնի միրգ-բանջարեղենի հայ խոշոր առևտրականները, որոնք տարբեր տեսակի գյուղատնտեսական մթերքներ, պտուղ-բանջարեղեն էին մատակարարում Լիոնի և Փարիզի խոշոր-մեծաքանակ շուկաներին:

Ֆրանսահայ խոշոր ու մանր առևտրականները և արդյունաբերողները տասնամյակների ընթացքում ժրաջան ու դժվարին աշխատանքով կարողացան արժանի տեղ գտնել Ֆրանսիայի տնտեսության տարբեր բնագավառներում: Նույնպիսի տեղ ունեին հայ բանվորներն ու ծառայողները, որոնք ընդգրկվել էին զանազան արհեստակցական միություններում ու քաղաքական կուսակցություններում՝ ծավալելով հասարակական-քաղաքական աշխույժ գործունեություն:

---

[15] Լևոն Զորմիրյան, նշվ. աշխ., էջ 350:
[16] Նույն տեղում
[17] Այսօր ապագա, Փարիզ, 17. 1. 1952:

Խոսելով ֆրանսահայ համայնքի տնտեսական գործունեության ու զբաղմունքի մասին, հարկ է նշել նաև հայ մտավորականության, ուսանողության և ազատ զբաղմունքի տեր մարդկանց, որոնք ուրույն տեղ են գրավում հայ և ֆրանսիական աշխատավորական շարքերում: Կ.Պոլսի մտավորականության այն մասը, որը կարողացավ վերապրել Մեծ եղեռնը, իր մեծամասնությամբ հաստատվեց Ֆրանսիայում: Այն ընդգրկեց նաև արևելահայ այն մտավորականներին, որոնք արտագաղթել էին Անդրկովկասից:

ЭТАПЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ВО ФРАНЦИИ (1922 – 1980 ГГ.)

З.М.КАСАБЯН

Резюме

Армянская колония во Франции сформировалась в начале 20-го века. В 1922 – 1926 гг. тысячи беженцев-армян пополнили ряды французского пролетариата. Около 80 % армян работало в шахтах, на металлургических заводах, в каменоломнях, а женщины – в прачечных и в прислугах. Это был первый этап пролетаризации армянских беженцев из городов и сел Турции и Западной Армении.

В 1929 – 1933гг. вследствие мирового экономического кризиса тысячи армян-рабочих оказались в рядах армии безработных. Они стали заниматься ремеслом и мелкой торговлей. Этот период определяется как второй этап социально-экономической жизни армянской общины во Франции.

Во время второй мировой войны и после многие армяне-ремесленники и торговцы расширили свою деятельность в общественном производстве и в торговле. Появились крупные промышленники и торговцы. Они включились в ряды французской промышленной и крупной торговой буржуазии.

Наряду с фабричным пролетариатом, ремесленниками, торговцами и промышленниками в армянской общине в качестве социальной прослойки появляется армянская интеллигенция (писатели, художники, музыканты, артисты, педагоги, ученые, религиозные деятели и студенчество).